

Տ. Հովնան արեղա ՀԱԿՈՒՅԱՆ

ՄԻ ԲԱՆԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՐԱԽՎԼԵՑԻ

«ԹՈՆԴՐԱԿԱՆՆԵՐԻ» ԱՂԱՆԴԱՊԵՏԻ ԱՆՉԻ ՇՈՒՐՉ

«... յուսանք առ Աստուած, զի փրկեսցէ զմեզ հանդերձ մերով զարմիւ յայսպիսի դիւական եւ մոլեգնեալ հաղրից եւ խմորեալ զանգուածոյ Սաղուկեցոցն...»
Գրիգոր Մագիստրոս Պահլավունի, «Թղթեր»

Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին իր 1700-ամյա պատմության ընթացքում ստիպված է եղել դիմակայել տնաբույս կամ էլ դրսից ներմուծված բազմաթիվ աղանդների ու «նորահայտ փրկիչների» հարձակումներին: Այսօր էլ բազմաթիվ կեղծ քարոզիչներ ու աղանդավորներ փորձում են շնագայլերի պես սողոսկել մեր եկեղեցու հոտը՝ հոշոտելու, զամբիացնելու և անդամ զանգված դարձնելու այն, ուստի կարևոր ենք համարում ոչ վաղ անցյալ դեպքերին անդրադարձը և աղանդապետի անձի հետ կապված առեղծվածի քննարկումը սույն հոդվածում:

Շիրակի Արախվի (այժմ՝ Փոքր Մանթաշ) գյուղում 1837թ. հայտնաբերվեց աղանդավորների մի խումբ, որն իրեն «թոնդրակյան» էր հորջորջում: Ս.Էջմիածնի նորաստեղծ Սինոդը Հայոց հայրապետի միջոտրոթյամբ դիմում է Կովկասի կառավարչապետ բարոն Ռոզենին՝ միջոցներ ձեռնարկելու սրանց նկատմամբ: Հետաքննությունը պարզում է, որ սույն աղանդավորները Արևելյան Հայաստան էին ներգաղթել Խնուսի գավառի Չևյուրմե (կամ Չևիրմե) գյուղից, որտեղ ժամանակին ակտիվ քարոզչությամբ էր զբաղվել հայտնի արկածախնդիր և ուրացող Հովհաննես երեց կոչեցյալը, որին համարում են «Բանալի ճշմարտության» «կատեխիզիսի» հեղինակ: Այս թղթումը հետաքրքրել է ոչ միայն հայ հետազոտողներին (Աղ. Երիցյանց,¹ Բ. Սարգիսյանց² Կ. Տեր-Սկրտչյան,³ Գ. Գյուլամիրյան⁴), այլև օտարներին՝ գերմանացի հայագետ Շայդվայլերին⁵ և անգլիացի Ֆ. Կոնիքերին:⁶ XXդ. թեմային անդրադարձել է նաև հայ անվանի պատմաբան Վ. Գրիգորյանը⁷ քննելով «կատեխիզիսի» հեղինակի անձի հարցը: Խնուսցի աղանդավորների և բողոքականության կապը մակերեսորեն, բայց հետաքրքիր քննության է առել սփյուռքահայ ժողովրդագիր-պատմաբան Ե. Մելիքյանը:⁸

Կարծիքները այս աղանդավորների խմբի և նրա աղանդապետի վերաբերյալ այնքան հակասական են ու իրարամերժ, որ ժամանակագրական առումով, օրինակ, տատանվում են սբ. Գրիգոր Լուսավորչից (Դ դար) (Կոնիքեր) մինչև ԺԸ դարերը (Աղ. Երիցյանց): Բողոքական զանազան խմբավորումներին չափազանց ոգևորել էր Հովհաննես չերեցի անձը, և սրանք փորձում էին ամեն կերպ լուսապսակ դնել հայտնի արկածախնդրի և ուրացողի գլխին, միևնույն ժամանակ ամեն կերպ «հնացնելով» թոնդրակեցիների հետ կապելով աղանդի գոյության արմատները: Նույնպիսի, բայց հակառակ մատերիալիստական աստվածամերժ դիրքերից էին հանդես գալիս խորհրդային հետազոտողները, որոնք «Բանալի ճշմարտության»-ը քննում էին որպես «սոցիալական ընդվզման» ձևերից մեկը ընդդեմ «հոգևոր ֆեոդալ ու ժողովրդական զանգված-

¹ Աղ. Երիցյանց, Թոնդրակեցի հայք մեր օրերում, «Փորձ», Թիֆլիս, 1890, N 10:

² Բ. Սարգիսյանց, Ուսումնասիրություն մանիքեա-պատիկեան թոնդրակեցիներու աղանդին եւ Գր. Նարեկացոյ թուղթը, Վենետիկ, 1893:

³ Կ. Տեր-Սկրտչյան, Պատիկեանց եւ Թոնդրակեցոց աղանդները արդի քննադատությամբ, «Արարատ», Էջմիածին, 1900, հուլիս:

⁴ Г. Гю л а м и р я н, Тондракцы (очерк из истории религиозных движений феодальной Армении), Л., 1936.

⁵ F. S c h e i d w e i l e r, Paulikianer probleme, Byzantinische Zeitschrift, Bt.43, Köln, 1950.

⁶ The key of Truth, a manual of the Paulician church of Armenia, Fred. C. Conybeare, Oxsford, 1898.

⁷ Վ. Գրիգորյան, Նոր տեղեկություններ «Բանալի ճշմարտության» երկի հեղինակ Հովհաննես երեցի մասին, Բանբեր Մատենադարանի, Եր., 1960, N 5:

⁸ Ե. Մելիքյան, Վիճակագիր Խնուս (Հարք) գաւառի և թոնդրակեցոց աղանդին և բողոքականութեան կապը ի Խնուս, Նիւ-Եօրք, 1943:

ներին կեղեքող հայոց եկեղեցու» (Գ.Գյուլամիրյան, Հ.Գաբրիելյան և այլք): Սակայն ճշմարտությունը շատ պարզ և անբռնագրոս հարթության վրա է գտնվում հարկավ: Աղանդն ու նրա աղանդապետը ոչ մի կապ չունենին դեռևս ԺՄ դարում Գրիգոր Մագիստրոս Պահլավունու կողմից արմատախիլ արված թոնդրակեցիների հետ, և միայն սրանց անունն էր օգտագործվում, որպեսզի ինչ որ կերպ պատմական անցյալի մշուշի մեջ պարուրեին նորոյրյա աղանդի իբր հնագույն արմատները:

Մրանցում, ինչպես նշեցինք վերը, աղանդները դիտվում էին որպես «սոցիալական շարժումների» դրսևորումներ, և ինչ որ տեղ նաև գովերգվում էին դրանց առաջնորդների ու համայնքի անդամների հավասարարական գաղափարները, նույնիսկ սրանց են վերագրում հարևան մահմեդական գյուղերի վրա զինված հարձակումներ գործելու և վրիժառու խմբեր ստեղծելու հանգամանքը, որի մասին մշուշոտ ակնարկում է Մխիթարյան Հայր Մեհերյանը: Մի խոսքով՝ «քաջ ու հերոս» մարդիկ, որոնք պայքարում էին «ընդդեմ սոցիալական և ազգային հարստահարության»:⁹ Բանն այն է, որ ցայժմ լրիվ ապացուցված չէ աղանդավորների և աղանդապետի մասնակցությունը վերը նշված հարձակումներին, կամ եթե այդպես է, ինչ տարբերություն կա զինված դաշակական ավազակախմբերի գործունեության մեջ, երբ նրանում կարող էին հայտնվել թե՛ հավատարացները, թե՛ կեսկեսները և թե՛ աղանդավորության խոտելի վարքագիծ որդեգրած հայերը: Մի խոսքով, ազգային-ազատագրական պայքարի զինված մարտիկներ փնտրելու ճանապարհին սույն հեղինակները անշուշտ մեղանշում են պատմական ճշմարտության դեմ:

ԺԸ դարի երկրորդ կեսը փորձությունների, պատմական վայրիվերումների շրջան էր հայ ժողովրդի և Մայր եկեղեցու համար: Չանազան քաղաքական կողմնորոշումների, գաղթօջախներում ծնունդ առած տարբեր ազատագրական ծրագրերի ու արևմտյան եկեղեցիների բացահայտ էքսպանսիայի պայմաններում, կարևոր էր պահպանել հայ ժողովրդի անդորրը Արևմտյան և Արևելյան Հայաստանում, որն իրականացնում էին Մայր Աթոռ Սբ.Էջմիածինն ու նվիրապետական մյուս աթոռները: Արևմտյան եկեղեցիների միսիոներներն ու նրանց հովանավորներն ամեն միջոց գործադրում էին իրենց հոգեբուխության գերխնդիրն իրականություն դարձնելու համար: Իրադրությունը բարդանում էր նաև նրանով, որ արևմտյան զանազան միսիոներները բացահայտ աջակցություն էին ստանում օսմանյան կենտրոնական և տեղական իշխանությունների կողմից: Բողոքականությունից սերված և հիդրայի պես բազմացած տարբեր աղանդներ՝ ոգևորվելով կաթոլիկ միսիոներների «հաջողված» փորձից, իրենց շոշափուկները ձգեցին դեպի Արևմտյան Հայաստանի խորքերը և պարարտ հող գտան հատկապես այն գավառներում, որտեղ արդեն իրենց քայքայիչ գործունեությանը «աչքի էին ընկել» կաթոլիկ հոգեբուխները: Վերջիններիս քարոզչության թիրախ դարձել էին Էրզրումի վիլայեթի Ալաշկերտի, Բաբերդի և Խնուսի գավառները (Էալեթները):¹⁰ Այստեղ ստեղծվել էին կաթոլիկ բազմամարդ համայնքներ, որոնցից հայտնի էին Քյուլի և Մոլլասուլեյման գյուղական համայնքները,¹¹ որոնցում հավաքվել էին Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերից կաթոլիկ հայեր: Դեռևս Միմեոն Երևանցի հայրապետի գահակալության տարիներին հիշյալ գյուղերի առաքելական բնակչությունը, նեղվելով կաթոլիկների բացահայտ ճնշումից և աջակցություն չստանալով տեղական թուրք և քուրդ իշխանավորներից, ստիպված էր դիմել Կ.Պոլստ պատրիարքին, որի ջանքերը սպարդյուն էին անցել:¹² Հարցն այն էր, որ ֆրանկ միսիոներները, ստանալով ֆրանսիական պետության բացահայտ աջակցությունը, փողի, կաշառքի և այլ միջոցներով գնում էին տեղական բեկերի և փաշաների «բարյացկամությունը»: Բանը հասել էր նրան, որ այնպիսի մի աննշան գյուղաքաղաքում, ինչպես Ալաշկերտն էր, թուրքական կառավարության թույլտվությամբ ԺԸ դարում սկսեց գործել ֆրանսիական հյուպատոսություն,¹³ որը դարձել էր հոգեբուխության իսկական շտաբկայան:

⁹ Հ. Գ. Գյուլամիրյան, Հայ փիլիսոփայության պատմություն, Եր., 1975 էջ 248:

¹⁰ Ավելի մանրամասն տե՛ս Ա. Մելքոնյան, Էրզրում, պատմաժողովրդագրական ուսումնասիրություն, Եր., 1997:

¹¹ Նույն տեղում, էջ 69:

¹² Մ. Ասնոյան, Մշո Ձոջ քարը, Եր., 1998, էջ 36:

¹³ Ա. Մելքոնյան, նշվ. աշխ., էջ 70:

Բնական էր, որ բողոքական միսիոներները, որոնք դեռևս ԺԸ դարի սկզբներին ներթափանցել էին Կ. Պոլիս, պետք է օգտվեին կաթոլիկ հոգևորսների «փորձից» և դիմեին առավել «կատարյալ» միջոցների՝ այս անգամ ժխտելով թե՛ հայ առաքելական և թե՛ կաթոլիկ եկեղեցիների դավանաբանությունը, ծպտվելով հին աղանդների քողի տակ: Մեփական ներկայությունը հիմնավորելու համար բողոքական տարբեր հոսանքները պատմական հետահայացների էին դիմում՝ հիշատակելով մեկ է դարում Հայաստանում ծնունդ առած պավլիկյաններին, որոնց հետևորդ էին համարում իրենց, մեկ էլ ԺԱ դարի թոնդրակեցիներին՝ սրանց համարելով միմյանց շարունակություն:

Օսմանյան պետության հայաշատ վիլայեթներում տիրող խառնակ իրավիճակը, տեղական քոչվոր ցեղախմբերի անօրինություններն ու ասպատակությունները, խժոժությունները զսպելու կենտրոնական կառավարության անկարողությունը հայ ժողովրդի համար ստեղծել էին կյանքի դժվարին պայմաններ:¹⁴ Ստեղծված անիշխանության պայմաններում պարարտ հող կար պղտոր ջրում ձուկ որսացողների համար, և ժողովրդի մի փոքր հատված, ենթարկվելով արևմտյան միսիոներների կաշուն հորդորներին, փրկության հույսով հեռացավ Մայր եկեղեցու ծոցից՝ ընկնելով հոգևորսների ցանցը:¹⁵ Այս ու այլ տեսակի միսիոներների թիրախ դարձան առաջին հերթին ոչ հավասարակշիռ բնավորություն և «փրկչական», «մարգարեական» մարմաջ ունեցող հիվանդոտ երևակայությամբ անձինք, որոնք դարձան գործիք վերը հիշված «հոգեփրկիչների» ձեռքին: Սրանց մեջ հատկապես աչքի էին ընկնում եկեղեցուց վտարված կամ կարգալույծ արված հոգևորականները, որոնք փորձում էին ինքնահաստատվել ուրացության պիղծ ճանապարհով միայն:

Ահավասիկ, ո՞վ էր Հովհաննես երեցը, որին հետայսու կարճ կանվանենք չերեց կամ չիք քահանա: Մույն բախտախնդրի փոթորկալից կյանքը, նրա ծննդավայրը և մահը բազմաթիվ հարցականների տեղիք են տալիս: Ցայժմ հետազոտողներից ոչ ոք, չի կարող ստույգ նշել չերեցի ծննդյան տեղը և թվականը: Նրա մասին տեղեկություններ ոչ միայն կցկտուր են, այլև հակասական, քանի որ 1838-1839թթ. ձերբակալված աղանդավոր արախվացիները նույնիսկ իրարամերժ ցուցմունքներ են տվել ռուսական դատական մարմիններին:¹⁶ Հովհաննեսի ծագման մասին ստույգ եզրակացություն չենք կարող անել նաև Մաշտոցի անվան մատենադարանի Կաթողիկոսական դիվանում պարունակվող նյութերից, որոնք աղանդապետի մասին ուղղակի տեղեկություններ են պարունակում 1782թ. սկսած, սակայն Հայոց հայրապետի թղթակցությունից երևում է, որ չերեցը մինչ այդ բավական բուռն գործունեություն էր ծավալել Արևմտյան Հայաստանում և հայկական գաղթավայրերում: Հետաքրքիրն այն է, որ դեռևս XIX դ. հետազոտողները (Շայդվայլեր) և հատկապես՝ խորհրդային պատմաբան Գ.Գյուլամիրյանը, թյուրիմացության մեջ ընկնելով, կատեխիզիսի հեղինակ են համարել Հովհաննես Վահագնունուն, ինչը ճշմարտությանը մոտ չէ: Բանն այն է, որ, ինչպես ճիշտ նկատում է Վ.Գրիգորյանը. «Նոսքն այստեղ այն մասին է, որ Հովհաննես Վահագնունին և էլի ինչ-որ մարդիկ հեղինակից խնդրել են գրել այդ գիրքը: Կատարելով նրանց խնդրանքը՝ հեղինակն այդ մասին համապատասխան նշում է արել հիշատակարանում: Եվ միայն այդքանը: Այնպես որ ոչ մի հիմք չկա Հովհաննես Վահագնունուն համարելու «Բանալի ճշմարտութեան» հեղինակ և կամ արտագրող ...»:¹⁷ Ֆ. Կոնիբերն իր հրատարակած «Բանալի ճշմարտութեան»-ի քննական բնագրի «Յիշատակարանի» ծանոթագրության մեջ ուղղակի նշում է, որ «ձ. (իմա. ձեռագրում-Հովհանն արեղա) աստանօր թերթ մի կամ քանի մի անկեալ»:¹⁸ «Յիշատակարանի» պահպանված տեքստի սկզբնական մախադասության իմաստն իսկ ցույց է տալիս, որ Վահագնունի կոչեցյալն ամենայն հավանականությամբ պատվիրատու էր, քան թե հեղինակ. «...ամենապայծառ Յոհաննես Վահագնունուն. քանզի սոքա մեծալ ջերմեռանդութեամբ խնդրեցին՝ ի մէնջ (ընգծումը մերն է-Հովհանն արեղա): Իսկ վասն խնդրելոյն նոցին յաճախեաց՝ ի

¹⁴ Հայ ժողովրդի պատմություն, ԳԱ հրատ, հ. IV, Եր., 1972, էջ 285:

¹⁵ Նույնը:

¹⁶ Վ. Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 342:

¹⁷ Նույն տեղում, էջ 236:

¹⁸ Տե՛ս, *The key of Truth, a manual of the Paulician church of Armenia*, Fred. C. Conybeare, Oxford, 1898, «Բանալի ճշմարտութեան», Յիշատակարան, էջ 64:

սիրտ իմ սերն ճշմարտութեան: Վասն որոյ ո՛չ կարացի թագուցանել զշնորհ սուրբ հոգւոյն: Այլ սկսայ կարգաւ գրել գտորք խորհրդարան և զբանալի ճշմարտութեան վասն սիրոյն խնդրեցողաց և ընդունողաց»:¹⁹ Թե ո՞վ էր սույն Վահագնունին, ցայժմ հայագիտության մեջ պարզված չէ: Արդյո՞ք սա աղանդի պարագլուխներից մեկն էր, թե՞ որևէ երևելի մեծավոր, մեզինչ առաջ հետազոտողները չեն պարզել: Եթե հավատանք 1838թ. հարցաքննված արխիվայցի աղանդավորներին («Ի Խնուս գաւառի ի գիւղն Չաուրմայ, նախքան զայս 55ամ, ոմն ի հայոց քահանայից՝ Օհանես անկեալ ի սույն աղանդ, շարադրեալ է զիրք մի, զոր լուեալ աղանդապետութիւն սոյն իրիցու տէրութիւնն Օսմանեաց ստիպեաց զնա թողուլ զայն դաւանութիւն և նմա չհանդուրժեալ՝ ընկալեալ է զհաւատ Մահմեդի՝ հանդերձ ընտանեօք իւրովք»),²⁰ դուրս է գալիս, որ Հովհաննեսը իր քարոզչությունը Խնուսում սկսել է 1783թ-ին, արդեն հասցրել էր հավատքն ուրանալ, ամուսանցած էր և ուներ զավակներ: 1783թ. չերեցը պետք է լիներ մոտավորապես 30-40 տարեկան հասուն տղամարդ, և նրա ծննդյան թիվը կարելի է դնել 1740-ական թթ.: Սակայն մեկ այլ վկայություն, որը պատկանում է մխիթարյան միաբան Հայր Պողոս Մեհերյանին, հիմք է տալիս ավելի վաղ շրջանում տեսնել Հովհաննեսի գործունեության հետքերը Արևմտյան Հայաստանում և Կ.Պոլսում: Հայր Մեհերյանն իր ինքնակենսագրությունում պատմում է մի հետաքրքրական դեպքի մասին, որին ակնհայտ է եղել 1773թ. Բերայից Կարին գնալու ճանապարհին: Մխիթարյան հոր իջևանած քրդաբնակ գյուղում ապրելիս են եղել հավատուրաց հայեր. «...աղանդատուր էին իբրև զթոնդրակեցիս, կամ կէսկէս էին և կամ արևորդիք»:²¹ Սույն աղանդատուրները խմբեր կազմած հարձակվում էին ոչ հայկական գյուղերի վրա և թալանում դրանք, իսկ ամենահետաքրքիրն այն է, որ սրանց շրջանում պահպանվել էր «արյան վրեժի» սովորույթը, և յուրայինի թափած ամեն մի կաթիլ արյան դիմաց պատասխանում էին արյամբ: Սրանց առաջնորդ հավանաբար եղել է Հայր Մեհերյանի հիշատակած Հովհաննեսը, որը կեղծ եպիսկոպոս ձևանալով, Կարնո մերձակա Բռռճիմասուրի վանքում 14 քահանա է ձեռնադրում: Սակայն Կարնո առաջնորդը, տեղեկանալով կեղծ եպիսկոպոսի գործունեության մասին, միջոցներ է ձեռնարկում, և այս բախտախնդիր աղանդապետը փախչում է Մանազկերտ, սկսում է քարոզել նրա շրջակա հայաբնակ գյուղերում: 1774-1781թթ. Կ.Պոլսում հայտնվում է ոմն Հովհաննես երեց, որը պնդում էր, որ ինքը Մշո կողմերից է կամ Խնուսից: Օսմանյան դատարանը այս Հովհաննեսին դատապարտում է ութամսյա թիապարտության և տաժանակրոջան: Հայագետներից շատերի կարծիքով այս պատիժը Հովհաննեսին նշանակվել էր իր աղանդավորական գործունեության համար, բայց մեր կարծիքով դա այդպես չէ: Հավատալով հայր Մեհերյանի քուրդ գրուցակցի գունագարդ պատմությանը («Քանզի նոքա ոչ միայն զփողս մեր առնէին եւ զերիարս, այլեւ սպանէին զմեզ /իմա. քրդերին-Հովնան արեղա/, զի թշնամիք մեր են, բայց դու հայ լինելով ոչ ինչ առնէին կենաց քոց») որոշ հետազոտողներ ի դեմս սրանց տեսնում են «թույլերին և լկվածներին» պաշտպանող հերոսների: Սա մեղմ ասած մոլորություն է և ցանկալին իրական ներկայացնելու անհաջող ձգտում, քանզի աղանդավորական ավազակախմբերի հարձակումների թիրախ էին դառնում նաև հայկական գյուղերը: Ավազակությունը կամ ավելի ճիշտ դաչաղությունը յուրօրինակ արհեստ էր դարձել Օսմանյան տերության արևելյան վիլայեթներում, որտեղ պետության շունչն իսկ բացակայում էր, և դեռևս ԺԷ դարից, սկսած օգտվելով անիշխանությունից, այստեղ ծավալվել էր ջալալիների շարժումը: Այնպես, որ սույն աղանդավորներին ազատամարտիկների լուսապսակ հազցնելու բոլոր փորձերն անհիմն են: Պոլսի հայոց պատրիարքի միջնորդությունից հետո սույն Հովհաննեսն ազատվում է տաժանակրոջանից և ըստ անգլիացի Կոնիքերի փախչում է Խնուս, իսկ ըստ Հայր Մեհերյանի՝ ազատվելով, մեկնում է Վենետիկ՝ սբ.Ղազար, որտեղ դրսևորում է իր դիվային, դժոխային ողջ էությունը, և Մխիթարյան հայրերը շատ շուտով սրան վտարում են կղզուց, «...օրեն իբրև դիւանոլ և մոլորամիտ»:²² Վերադառնալով Կ.Պոլիս՝ սա ա-

¹⁹ «Բանալի ճշմարտութեան», Յիշատակարան, էջ 64:

²⁰ Աղ. Երիցեանց, նշվ. աշխ., էջ 108:

²¹ Բ. Սարգիսեանց, նշվ. աշխ., էջ 102:

²² Նույն տեղում, էջ 103:

մուսնանում է և անմիջապես դավանափոխ լինելով՝ ընդունում է մահմեդական Աբդուլլահ անունը: Հովհաննես չերեցի ողջ բախտախնդրությունը հատակ երևում է նրա հետագա քայլերում: Երեխայի ծնունդից հետո սույն բախտախնդիրը թողնում է կնոջը և մեկնում Կարին, որտեղ նրա «համբավը» հայտնի էր տեղի հայ բնակչությանը և հատկապես Կարնո առաջնորդին: Վերջինիս աչքից հեռու մնալու համար չերեցը շուտափույթ տեղափոխվում է Մուշ, այնուհետև նաև ավելի հեռու՝ Խնուս: Այստեղ չերեցի հետ կատարվում է հերթական մետամորֆոզը: Հանկարծ նա որոշում է վերադառնալ Մայր եկեղեցու գիրկը, մեղանչել և ապաշխարել: Մեզ անհայտ պատճառներով սրա խնդրանքը իրեն առաքելական եկեղեցու քահանա ձեռնադրելու մասին նույնիսկ հարգվում է տեղի հոգևոր առաջնորդների կողմից: Ահա թե ինչ է վկայում հայր Մեհերյանը այս արտառոց դեպքի մանրամասների մասին. «Եւ նա չոքաւ ի գիւղն Մարուխ և ամուսնացաւ: Յետ ամուսնանալոյն չոգաւ առ դատաւորն գաւառի և ասէ ցնա.- Կամիմ քահանայ ձեռնադրուիլ, բայց ոչ ձեռնադրեն, թէ թուրքացեալ ես: Իսկ դատաւորս առաքեաց զսպասաւորս իւր ի Կոբայ վանս, որ է ի Բուլանուխ՝ կից ընդ Մանազկերտ գաւառին, ուր էր եպիսկոպոս մի, զոր բռնութեամբ բերին ի Խնուս ի գիւղն Մարուխ և ետուն զուրացողն ձեռնադրեալ քահանայ»:²³ Ամենայն հավանականությամբ այստեղ խառն էր Խնուսի քուրդ բեկի մատը, որը, ինչպես կտեսնենք ստորև ամեն կերպ պաշտպանում և խրախուսում էր չերեցին: Վկայությունից պարզ է, որ ձեռնադրությունը կատարվել է ապօրինի և ստիպողաբար: Հետայսու սկսվում է չերեցի գործունեության ամենաակտիվ շրջանը, որը համընկնում է 1782-1791թթ. միջոցը: Օգտվելով տեղական իշխողների հովանավորությունից՝ նա իր աղանդի ցանցն է զգում Խնուսի մի շարք գյուղերի բնակչությանը: Առաջին անգամ տեղեկանալով Հովհաննեսի չարափառությունների մասին Հայոց հայրապետ Դուկաս Կարնեցին շտապում է նամակ հղել Կարին քաղաքի վեքի Հայրապետին, որից ամենայն հավանականությամբ ահազանգ էր ստացել: Հայրապետին ուղարկված նամակի հետ նա գրություն (փուսուլա) է ուղարկում Կարնո մեծավոր Մինաս պետին, որից ձգտում է մանրամասն տեղեկություն ինանալ. «...զմոլորեցուցիչ երիցեն, որ է յերկիրն Խնուսու»:²⁴ Դուկաս հայրապետի՝ անհանգստությունն արտահայտող հաջորդ նամակը՝ ուղղված Պոլստ պատրիարքին, փվագրվում է 1792թ. մայիսի 11-ով, որտեղ արդեն ուղղակի վկայության ենք հանդիպում Խնուսի բեկի կողմից չերեցին օժանդակելու և խրախուսելու մասին. «...ըստ բանի Յոհաննո սրբազան Առաքելոյն, թէ նեռինք բազում եկեալ են յաշխարհ եւ արդեն երեւին, յանցեալ ամսն Յովաննէս չերեց ոմն, որ քանիցս ոստեալ էր ի հաւատոյ և ի կրօնից սրբոյ եկեղեցոյս մերոյ և ապա բռնութեամբ Խնուսու բեկին քահանայ ձեռնադրեցեալ, ի Կարին եւ Խնուս յայտնեալ էր զաղանդս ոչ միայն ախտարմայութեան, այլ զմերձաւորս թոնդակեցոց...»:²⁵

Հարկ ենք համարում կանգ առնել մի կարևոր փաստի վրա, որը կամ վրիպել է մեզ մախորդած հետազոտողների (Աղ. Երիցյանց, Վ. Գրիգորյան և այլք) տեսադաշտից կամ էլ նրանք չեն նույնացրել Միմեոն Երևանցի հայոց հայրապետի հիշատակած աղանդավոր Հովհաննեսին մեր քննության առարկա դարձած չերեցի հետ: Բանն այն է, որ Միմեոն հայրապետը, խոսելով կաթողիկոսություն ընդունած հավատարացներին պատժելու ուղղությամբ իր ձեռնարկած քայլերի մասին, բացի Գևորգ Թոխատեցի կեղծ վարդապետից հիշատակում է այլ անձերի, որոնք ուղղակիորեն անվանվում են ոչ թե *Ֆռանկացած հայեր*, ինչպես հիշյալ կեղծ վարդապետը, այլ հենց *աղանդավորներ*: Ահա թե ինչ է գրում Միմեոն կաթողիկոսը. «Իսկ Ախալցխայի երկու հրամանը ուղարկում է (*խոսքը Օսմանյան սուլթան Մուսթաֆայի հրահանգների մասին է Էրզրումի և Ախալցխայի փաշաներին-Հովնան արեղա*) հետևյալ սպառնական պատվիրանների հետ, այն է՝ Պողոս, Ստեփան և Հովհաննես սևագլուխները, որոնք *աղանդավորներ են՝ (ընդգծումը մերն է-Հովնան արեղա)* բնակություն գտած Ախալցխայում, երկրին աղտեղություն հարուցողներ են, նաև Հակոբ ոչ-երեցը՝ ուղարկվեցին Էջմիածին...»:²⁶ Այնուհետև Միմեոն Երևանցին պատմում է, թե հիշյալ չոքս աղանդավորները ինչ

²³ Բ. Ս ա թ գ ի ս ե ա ն ց, նշվ. աշխ., էջ 103:

²⁴ Մատենադարանի Կաթողիկոսական դիվան, թղթ. 97, փավ. 133, էջ 5:

²⁵ Դիվան հայոց պատմության, նոր շարք, գիրք առաջին, Դուկաս Կարնեցի, հատոր Բ. 1786-1792, աշխատասիրությամբ Վ. Գրիգորյանի, Եր., 2003, էջ 708:

²⁶ Միմեոն կաթողիկոս Երևանցի, Ջամբո, Եր., 2003, էջ 56-57:

ճակատագրի արժանացան հետագայում. «Մրանք մնացին սուրբ Աթոռում երեք տարի, շատ նեղություն կրեցին բանտում, կապանքի մեջ, ծեծի և այլ պատիժների ենթակա, մինչև որ երկու անգամ հայերեն հավատարմագիր տվեցին մեր դավանությանն անցնելու խնդրանքով և ներողության հայցումով, որ այլև չեն դառնալու նույն աղանդին»:²⁷ 1771թ. Կարսի զորահրամանատարի միջնորդությամբ այս աղանդավորները նախապես արդեն թուրքերեն մեղայագիր գրելուց հետո արձակվում են՝ պայմանով, որ այլև չեն զբաղվի աղանդավորական գործունեությամբ:²⁸ Սույն աղանդավորները Ախալցխա էին ներթափանցել հարևան Էրզրումի փաշայությունից, որտեղ գտնվում էին նրանց քարոզչության հիմնական կենտրոնները: Մակայն այստեղ մեզ հետաքրքրում է հիշյալ աղանդավորական քառյակի մեջ *Հովհաննես* կոչեցյալը: Սա չէ՞ արդյոք ապագա Հովհաննես Խնուսեցի չերեցը, որի ճակատագիրը կարծես կրկնվում է 1791թ., թե՞ Միմեոնի հիշատակած հավատորացը նույն անձը չէ: Մեր կռահման հիմքում կան մի շարք ոչ ուղղակի վկայություններ, որոնք խոսում են երկու *Հովհաննեսների* միևնույն անձը լինելու օգտին: Օրինակ. թե՛ առաջինը և թե՛ երկրորդը ի սկզբանե հոգևորականներ չէին՝ Միմեոն Երևանցի ուղղակիորեն ասում է «... որ հոգևոր կարգ չունեցող էին (բնագրում՝ *չկարգաւորը* - Հովհաննես արեղա)»:²⁹ Երկուսն էլ առերես իրենց մորթը փրկելու համար հրաժարվում են աղանդավորական գործունեությունից: Հովհաննես չերեցը, գիտե՞նալով, թե ինչ է սպասում իրեն Էջմիածնում, ամեն կերպ փորձում էր խուսափել մի անգամ արդեն իր գլխին եկածից: 1791թ. չերեցի ցուցաբերած վարքագծից պարզ է դառնում, որ նա արդեն անցել էր պատժի այս եղանակներով, և նրա փախուստը բանտից ամենևին էլ պատահական չէր: Երկու տասնամյակ հետո վերադառնալով նույն բանտը՝ նա արդեն ծանոթ էր դրա պայմաններին, կարգ ու կանոնին, ինչպես նաև հսկողության իրականացման եղանակներին և պատահական չէր, որ այսքան կտտանքներից հետո նրան հաջողվեց փախչել Էջմիածնից: Եվ վերջապես, առաջին և երկրորդ դեպքերում չերեցին հովանավորում են թուրքական բարձր պաշտոնյաները և միջնորդում են Միմեոն և Ղուկաս հայրապետների առջև՝ նրանց ազատ արձակելու:

Հովհաննեսի աղանդավորական գործունեությունն ընդգրկում էր հիմնականում Էրզրումի փաշայության տարածքը և մասնակիորեն Մանազկերտ քաղաքն ու նրա շրջակայքը: ԺԸ դարի վերջերին հիշյալ վիլայեթի մեջ էին մտնում պատմական Տարոնի և Բագրևանդի գավառների մի մասը՝ մասնավորի Մուշը, Ալաշկերտը և Խնուսը: Ինչպես նշել էինք վերը, այստեղ դեռևս հիշյալ դարի սկզբներին ակտիվ գործունեություն էին ծավալել ֆրանկ միսիոներները և բավական հաջողության հասել հատկապես կեսկեսների³⁰ շրջանում: Հովհաննես չերեցը ևս այստեղ պարարտ հող գտավ իր դիվային գաղափարների քարոզչության համար: Հարկ է նշել, որ թե՛ հունադավան, թե՛ հռոմեադավան և թե՛ այլևայլ բողոքական աղանդներ դավանող, Մայր եկեղեցուց հեռացած հայերի գերակշիռ մասը առաջին հերթին կորցրեց լեզուն և հետո նաև՝ ազգային պատկանելությունը: Թուրքացած կամ մահմեդականություն ընդունած հայերը հիշյալ դավանությանցներից էին: Այստեղ բացառություն չէր կարող կազմել նաև չերեցը, որի ուրացության և մահմեդական Աբդուլլահ անունն ընդունելու փաստը ապացուցման կարիքը չունի: Ինչն էր դրդել Հովհաննեսին՝ Վենետիկից վճարվելուց հետո գնալ հավատորացության և այնուհետև նաև աղանդավորական գործունեության: Նույնիսկ Վենետիկում զգացել էին, որ գործ ունեն հիվանդ երևակայությամբ և դիվային բնությամբ մարդու հետ, որն ընդհանրապես կապ չունի քրիստոնյայի կերպարի հետ և առավել հակված է մոլագար մտքի մթագնումների: Այս խնդրի վրա կարող է լույս սփռել չերեցի կյանքի Կ. Պոլսի փուլը: Օսմանյան մայրաքաղաքում ԺԸ դարի կեսերին վիստում էին զանազան միսիոներական կազմակերպություններ: Իր անհավասարակշիռ բնավորությամբ չերեցը լիովին համապատասխանում էր հոգեորանների չափորոշիչներին և ամենայն հավանականությամբ, Կ. Պոլսում հավաքագրվել էր բողոքական աղանդներից մե-

²⁷ Միմեոն *կաթողիկոս Երևանցի, Ջամբո, Եր., 2003, էջ 56-57:*

²⁸ Նույնը:

²⁹ Նույնը:

³⁰ *Կեսկեսները կիսամահմեդական հայերն են, որոնք, ի տարբերություն լրիվ իսլամացած հայերի, պահպանել էին հավատքի և ազգային սովորությունների որոշ տարրեր և անուններին ավելացնում էին օղի (որդի) թուրքերեն ձևը, օր. Պետրոսյան, Հովհաննես օղի և այլն:*

կի կողմից: Այս հանգամանքի մասին ոչ ուղղակիորեն ակնարկում է նաև հայր Մեհերյանն իր անտիպ ինքնակենսագրության մեջ:³¹ Այլ կերպ ինչպե՞ս կարելի է բացատրել, որ խղճուկ կրթություն ստացած սույն չերեցը իր թղթոնում չնայած էկլեկտիկ, բայց որոշակի պատկերացումներ ունի լյութերականության և կալվինականության որոշ դրույթների վերաբերյալ: Բողոքականության հիմնադիրների ուսմունքը հայալեզու հրատարակություններ ունեցավ միայն հաջորդ՝ XIX-ր., երբ Կ.Պոլսում հրատարակչական գործունեություն ծավալեցին «ամերիկածին» բողոքական աղանդները: Ուրեմն չերեցն ուներ «հայախոս ուսուցիչներ» Կ.Պոլսում, որոնց միջոցով էլ ծանոթացել էր բողոքական ուսմունքին: Առավել հետաքրքիր է դեպքերի հետագա ընթացքը, երբ լույս աշխարհ պետք է գար չերեցի «երախայրիքը»: Կ.Տեր-Սկրտչյանը գտնում է, որ ամենայն հավանականությամբ Հովհաննեսը ինչ-որ տեղից ձեռք էր գցել մի հին ձեռագիր, որում շարադրված էր թոնդրակեցիների ուսմունքը: Այս ձեռագրում իբր թե նա կատարել է որոշ լրացումներ և մոցրել իր ուսմունքի ինչ-ինչ տարրեր:³² Մեզ համեմայնդեպս այդպես չի թվում, քանի որ գոնե ցայժմ թոնդրակեցիների ուսմունքն արտահայտող որևէ փաստաթուղթ կամ նույնիսկ պատասիկ չի հայտնաբերվել, կամ էլ գոնե ժամանակակիցներին հայտնի չէ: Հայագիտության մեջ ապացուցման կարիք չունեցող փաստ է, որ թոնդրակեցիների և ի մասնավորի, նրանց աղանդապետ Սմբատ Չարեհավանցու ուսմունքի մասին ուղղակի և ոչ ուղղակի տեղեկություններ են հաղորդում պատմիչ Արիստակես Լաստիվերտցին³³ և հատկապես ԺԱ դարի նշանավոր պետական գործիչ և ակնավոր գիտնական Գրիգոր Մագիստրոսը, որն արմատախիլ արեց «ղիական եւ մոլեգնեալ» աղանդը:³⁴ Այստեղ խոսքը առավել շատ վերաբերում է թոնդրակեցիների անունը օգտագործելու պարագային, քան թե ԺԱ դարի աղանդավորական շարժման բուն ուսմունքի օգտագործման խնդրին: Այս պարագայում ևս կարծես պատմությունը կրկնվում էր: ԺԱ դարի բյուզանդական աղբյուրները, օրինակ, նույնացնում էին Սմբատ Չարեհավանցու հիմնած թոնդրակյան աղանդը պավլիկյանների հետ և սրանց համառոտեն հորջորջում են պավլիկյաններ անվամբ: Ակադեմիկոս Հ.Բարթիկյանը, հերքում է այս թյուր կարծիքը, ցույց տալով երկու աղանդների զարգացման պարագայում մեջ առկա տարբերությունները:³⁵ Ավելի վաղ նույն պավլիկյաններին սբ. Հովհանն Օձնեցի հայոց հայրապետն անվանում էր մծղնեականներ:³⁶ Դուրս է գալիս, որ յուրաքանչյուր նորահայտ աղանդ հիշատակվում է իրեն նախորդածի անվամբ կամ նույնացվում է նրա հետ: Երիցս ճշմարիտ էր Աղ.Երիցյանը, որը գրում էր. «Աղանդները դարձրել չունին և սովորաբար ամենակարճ միջոցում տեսակ-տեսակ փոփոխության են ենթարկվում...»:³⁷ Եթե վերանանք շատ մանրամասներից, հին ու նորելուկ բողոքական բազմաթիվ աղանդների ուսմունքներում կարող ենք պեղել արիոսականությունից ու մանիքեականությունից սկսած մինչև բողոքականության ու այրիզոյականների աղանդներին հատկանշական բազմաթիվ գծեր: Ուստի երբեք էլ պատահական չէ, որ հայագիտական աղանդապետը կարող էր քողարկվել թոնդրակեցիների անվան տակ:

Վերը արդեն նշեցինք, որ Հովհաննեսը իր քարոզչության համար պարարտ հող էր գտել Էրզրումի փաշայությունում և, ի մասնավորի, Խնուսի և Մանազկերտի գավառներում: Խնուսում չերեցի քարոզչության որջը դարձել էր հատկապես Չևիրմեն կամ Չևյուրմեն, որը Ղ.Ինճիճյանի վկայությամբ, ինչպես և Կարաչոբանը, գավառի ամենաբազմամարդ գյուղերն էին:³⁸ Խնուսը և Ալաշկերտը վաղուց դարձել էին այլադավան որումի սերմանման փորձադաշտ: Տեղի հայ բնակչությունը հարձակումների էր ենթարկվում քրդական աշիրաթների և կովկասյան այլևայլ ցեղերի կողմից: Այս և ընդ-

³¹ Բ. Ս ա ղ զ ի ս ե ա ն գ, նշվ. աշխ., էջ 233:

³² Կ. Տ ե ռ – Մ կ ռ տ չ յ ա ն, նշվ. աշխ., էջ 112:

³³ Ա ղ ի ս տ ա կ ե ս Լ ա ս տ ի վ ե ռ տ ց ի, Պատմություն հայոց, քարգմ. և առաջաբանը.

Վ.Գևորգյանի, Եր., 1971, գլ. ԻԲ-ԻԳ:

³⁴ Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, Ալեքսանդրապոլ, 1913:

³⁵ Հ. Բ ա ղ ի կ յ ա ն, Գրիգոր Մագիստրոսի քաղաքական կողմնորոշման հարցի շուրջ, Էջեր հայ ժողովրդի պատմության և բանահյուսության (հոդվածների ժողովածու), Եր., 1971, էջ 66:

³⁶ Հ ն վ հ ա ն Օ ձ ն ե ց ի, Երկեր, Եր., 1999, էջ 8:

³⁷ Աղ. Ե ղ ի ց յ ա ն գ, նշվ. աշխ., էջ 108:

³⁸ Ղ. Ի ն ճ ի ճ ե ա ն, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հ. Ա, Վենետիկ, 1806, էջ 82:

հանրապետ Արևմտյան Հայաստանի ու Պարսկահայքի մյուս գավառների բնակչության միակ հենարանն ու պաշտպանը մնում էր Մայր եկեղեցին և Ամենայն հայոց հայրապետը, որն ամեն կերպ փորձում էր համոզել տեղի թուրք և պարսիկ պաշտոնյաներին, պաշտպանել հայերին: Մեր ձեռքի տակ կա ցայժմ շրջանառության մեջ չդրված մի փաստաթուղթ, դա Ղուկաս Ա Կարնեցի հայրապետի 1791թ. սեպտեմբեր ամսով քվազովող նամակն է Բայազետի մեծավորներ Մահակ և Մանուկ աղաներին: Դրա բովանդակությունից երևում է, որ Բայազետում և Պարսկաստանի Խոյ քաղաքում բույն էին դրել բողոքական երկու քարոզիչներ, որոնց բնութագրումներից երևում է, որ գործ ունենք չերեցի համախոհների հետ. «Ձի յօգոստոսի ԻԴ /24/-ին գրել թուրքն ձեր առ մեզ, հանդերձ զարշահոտ թղթովն փառակեցի Մահակ խելագարին, զորս ընթերցեալ հասու եղաք վատթար գրութեանց նոցին: Չորոյ օրինակն վեր առաք և զիսկն վերադարձուցաք առ ձեզ ընդ թղթոյս, ըստ խնդրոյ ձերոյ: Եւ զչիք Գաբրիէլ չերեցն Խօյոյ (ընձօժմը մերն է-Հովնան արեղա) բանիւ արարեալ, զթուղթն առ ձեզ յղեցաք, եվ դու, սիրելիքդ մեր, ի տեղոյդ հաւատարմաւ յղեսչիք առ չիք Գաբրիէլն՝ ամբողջ կնքով: Եւ մինչ զղջացեալ գայցե գտուրք աթոռս, ի հարկէ, ըստ վատթար արարմանցն զպատիժն կրելոց է: Եւ զայն թղթոյ օրինակն, զոր վեր առաք, յղելոց եմք ի մեծն Պօլիս, եւ այն փառակեցի Մահակ գարշելոյն եւս ըստ արժանոյն թուրք գրեալ յղելոց եմք ի Մաղիմ: Եւ դուք, սիրելիքդ մեր, մի գուցէ խղճահարեցիք, ի հարկէ յառնե գարշելոյ հոտ բուրէ:»³⁹ Հիշյալ ուրացողների մասին խոսելուց հետո Ղուկաս հայրապետը Բայազետցի մեծավորներին Հովնանեն չերեցին վերաբերվող հարց է ուղղում, որում կարծես զգոնության կոչ կա. «Այլեւ յանցեալն մեր Նահապետն յայդր գրեաց տիրացու Գեորգին Խնուսա չիրիցու փախչիլն առ ի ծանուցանել ձեզ: Ահա այժմ եւս գրեմք սիրելեացդ մերոց, զի պարտիք լաւապէս հասու լինիլ եւ իմանալ, թե արդեօք ուղղեալ է զինքն առ եկեղեցիս մեր, թէ վերստին ի մոլար աղանդն իր կայ: Հարկ լիցի սիրելեաց մերոց հետեիլ եւ ստոյգն իմանալ, եւ թղթով մեզ ծանուցանել, զի ըստ այսմ հոգս արասցուք, մի գուցէ զանց առնիցէք»: ⁴⁰ Համարյա նույնպիսի նամակ-հարցեր է ուղղում Ղուկաս հայրապետը Էրզրումի, Ախալցխայի, Թիֆլիսի և այլ վայրերի առաջնորդներին և մեծավորներին, ինչը խոսում է չերեցի գործունեության աշխարհագրության բավական լայն ընդգրկման մասին: Դուրս է գալիս, որ սույն չերեցը մոտ քսան տարի բավական ազատ գործել է Հայաստանի երկու հատվածներում և նույնիսկ նրա սահմաններից դուրս: Թե ինչու՞ Մուր Էջմիածինը բավական ուշացած քայլեր ձեռնարկեց այս աղանդի դեմ, մեր կարծիքով պայմանավորված էր մի քանի հանգամանքով: Վերը արդեն գրել ենք, որ դեռևս Միմենո Երևանցի հայրապետը 1760-ական թթ. վերջին և 1770-ական թթ. սկզբին լուրջ քայլեր էր ձեռնարկել նորեկ աղանդավորների դեմ և ինչ-որ հաջողության հասել: Բայց իրադրությունը կտրուկ փոխվեց Միմենո հայրապետի մահից հետո (1780թ. հուլիս): Բաղաքական խառը և ծանր պայմանները, որ ստեղծվել էին Պարսկաստանում և ի մասնավորի Երևանի խանությունում, անհրաժեշտություն էին դարձրել հայրապետի մահից հետո ոչ մի կերպ թափուր չթողնել Ամենայն հայոց կաթողիկոսի գահը՝ նույնիսկ շատ կարճ ժամանակով: Հակառակ պարագային, Մայր աթոռին սպասվում էին բազում փորձություններ և անդամալի կորուստներ: Ուստի հեռատես և շրջահայաց Միմենո հայրապետը վաղօրոք միջոցներ էր ձեռնարկել այս ուղղությամբ: Մահկանացուն կնքելուց երկու օր առաջ Միմենո հայրապետն իր մոտ հրավիրեց սբ. Էջմիածնում գտնվող եպիսկոպոսներին և հայտարարեց, թե Չմյուռնիայից կանչել է Ղուկաս Կարնեցուն, որպեսզի «յաջորդաբար նա լիցի հայրապետ և կառուարեսցէ գտուրք Աթոռս յասմ վտանգածին և վրդովեալ ժամանակիս»: ⁴¹ Ստիպված խախտելով կաթողիկոսական ընտրության հաստատված կարգը Էջմիածնի միաբանները Միմենոի թաղումից մեկ շաբաթ անց՝ 1780թ. օգոստոսի 2-ին, կաթողիկոս ընտրեցին Ղուկաս Ա Կարնեցուն: Բողոքն էլ լավ հասկանում էին, որ սա դժգոհության տեղիք էր տալու գաղութահայության մեջ: Հատկապես դժգոհ պետք է լիներ Պոլսո Չաքարիա պատրիար-

³⁹ Դիվան հայոց պատմության, նոր շարք, զիբք առաջին, Ղուկաս Կարնեցի, հատոր Բ. 1786-1792, աշխատասիրությամբ Վ. Գրիգորյանի, Եր., 2003, էջ 645:

⁴⁰ Նույն տեղում, էջ 646:

⁴¹ Նույն տեղում, էջ LXXXI:

քը, որը համարվում էր գահի ամենահավանական թեկնածուն: Վերջինս իրեն սպասել չտվեց. նա կարգադրեց չեղյալ հայտարարել ընտրությունը, չհրապարակել Ղուկաս հայրապետի անունը եկեղեցիներում և արգելք հանդիսացավ ընտրության ճանաչման ամփանական ֆերմանի հրապարակմանը: Փաստորեն, առժամանակ, ստիպված խզվեցին սուրբ Էջմիածնի կապերը Օսմանյան կայսրության տարածքներում գտնվող վիճակների ու թեմերի հետ: Ճիշտ է, Չաքարիա պատրիարքի Բուրսա քաղաքում և հատկապես հայտնի «Թուրք կանոնականի»⁴² հրապարակումից հետո իրադրությունը կայունացավ, բայց ժամանակն աշխատում էր աղանդավորների օգտին, քանի որ Սիմեոն հայրապետի մահից մինչև 18 եպիսկոպոսների, 38 վարդապետների և արեղաների կողմից ստորագրված կանոնական այս փաստաթղթի հրապարակումը անցել էր յոթ տարի (1780թ. հուլիս 24 - 1787թ. հունվարի 11): Օգտվելով այս «քարեպատեհ» առիթից՝ աղանդն իր շոշափուկներն էր տարածել նաև վիրահայոց մեջ՝ ի մասնավորի Թիֆլիսում: Թիֆլիսում աղանդավորական որջի գոյության մասին անուղղակի վկայում է Ղուկաս հայրապետի 1791թ. դեկտեմբեր 31-ով թվագրված նամակը՝ «Թուրք առ Բաղդաստու իշխանանս վասն վայրաբանութեան քիֆիլեցի աղթարմայ չիք Ղուկասին»:⁴³ Հայոց հայրապետին խիստ զայրացրել էր «աղթարմայ»⁴⁴ չիք Ղուկասի» տարածած սուտը՝ կապված իր անձի հետ. «Ձի մարդեմիս (խմբ. այժմ, ներկայումս-Հովնան արեղա) քիֆիլեցի Քափանակեց Աֆթանդիլի որդի Ստեփանն այտի հղեալ էր առ մեզ գործնակ քրքոյ պատմութեան բարբաջանաց ախտարմայ չիք Ղուկաս Առաքելեան, որում եւ դուք վկայեալ էիք, թե վայրադողանցն այն ի հոտեալ բերանոյն արտափսխեալ է, թե կաթողիկոսն զայն ինչ ասաց ինձ:»⁴⁵ Հիշյալ աղանդավորը Թիֆլիսի մեծավորների թախանձանքով ընդունելության էր արժանացել Ղուկաս հայրապետի կողմից, քանզի «Եւ ոչ միայն դա, այլ վիրք եւ հոռօք եւ տանկեք եւ քիւրտք բազմիցս անգամ ըստ դիպմանն զան առ մեզ, յորոց եթե խորեաք, ըստ Առաքելոյն բանի, պարտ էաք եւ յաշխարհէ իսկ ելանել, այլ ըստ հարկի ժամանակիս քաղաքատրութեամբ անցուցանեմք զիրաքանչիւրսն, յորմէ ոչ ինչ ընծայի հաւատոյ: Բայց ի յախտարմայ չիք կարգաւորացն գայթակղեցուցչաց թէ զբանիսն ենք առ ձեռն բերեալ բազում ծախտք եւ պատժեալ ըստ արժանեացն, զայն եւս, ի հարէ, լուեալ եք կամ լսելոց էք»:⁴⁶ Սակայն պարզվում է, որ սույն բախտախնդիրը քիֆիլեցիներին և ապա բաղդադցիներին է մատուցել աղանդավորական իր բարբաջանքը կաթողիկոսի անունից: Այնուհետև Հայոց հայրապետը գրում է. «Չոր ի յընթեռնուլն մեր յիրաւի կարելի էր խոցեցաք ի սիրտ եւ յոզի: Քանզի զայլ կերպ զրաբանութիւնս եւ նախատինս տանելի է՝ յուսով աւետարանական բանին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, թէ երանի ձեզ, յորժամ նախատիցեն զձեզ եւ ասիցեն զամենայն բան չար զձեզ զսուտ եւ այլն: Բայց զամբիծ հաւատոյ եւ զուղիղ դաւանութենէ զրծաւորութիւն եւ զքիւրտքիւն զրաբանելն, անտանելի է ուղղափառաց: Ըստ այսմ եւ այդ անիծելոյ ստոյգ չարութեամբ եւ նենգաւորութեամբ արարեալ վայրահաջութիւնն դժուարակրելի ինն է մեզ: Եւ այդպիսի հերձուած անիծեալքն ոչ թողին զպէսպէս չարահնարութիւնս, զորս ոչ գործեցին առ խղճայի ազգ մեր, այժմ զայդ են սկսեալ բամբասանս դնել հոգեւորական գլխոյն ի գայթակղութիւն խորհրդական անդամոցդ, թուի թէ եւ պիղծոյ այդ ի պատմագումար սատանայախորհուրդ Միքայելէն (Միքայել Չամչյանին և նրա եռահատոր Հայոց պատմությունը-Հովնան արեղա) է ուսեալ, որ ի ստալից պատմագրեանսն իւր զբազումս ի յուղղափառ հայրապետացն մերոց եւ յիշխանացն պէսպէս դողանցանօք երկաբնակ ցուցանէ ազգին, զի միամիտ ժողովուրդքն գայթակղեցեցին»:⁴⁷ Հավանաբար հիշյալ չիք Ղուկասը ժողովրդին և մեծավորներին ներկայացրել է իր ինչ-ինչ հնարավոր շնորհներն ու «առաքինությունները»՝ խիստ զայրացնելով Ղուկաս հայրապետին. «Ապա այդ հոտեալ գարշելիդ ո՞վ է եւ զի՞նչ շնորհ ունի, որ համարձակիցէր առաջի մեր խօսիլ զչար աղանդոյն իրեանց եւ կամ

⁴² Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 69:

⁴³ Դիվան հայոց պատմության, էջ 686-687:

⁴⁴ Աղթարմայք կամ ախթարք-բախտագուշակներ, հմայություն կամ մոգություն անողներ, աստղագուշակներ, տես Նոր բառքիքը հայկազեան լեզուի, հ. Ա, Վենետիկ, 1836, էջ 19:

⁴⁵ Դիվան հայոց պատմության, էջ 686:

⁴⁶ Նույն տեղում, էջ 687:

⁴⁷ Նույնը:

րից օգտվելով հայ հասարակական և եկեղեցական կյանքում առաջացած ներքին հակասություններից ու խնդրանքներից՝ սրանք ակտիվ գործունեություն ծավալեցին Արևմուտքյան Հայաստանում՝ քողարկվելով մարդասիրական և բարեխնամ գործունեության տակ: Նրանք հիմնում էին հիվանդանոցներ, որբանոցներ և նույնիսկ դպրոցներ, որոնցում իրականացվում էր «ուղեղների լվացման» իրենց ծրագիրը՝ արդեն եվրոպական և ամերիկյան հայախոս քարոզիչների միջոցով:

Վերադառնալով մեզ հետաքրքրող ժամանակաշրջանին, նշենք, որ բողոքական քարոզիչներն արդեն բավական լավ էին ուսումնասիրել դեռևս միջնադարում Հայաստանում գործած այլազան աղանդների գործունեությունը: Նրանք հավանաբար բյուզանդական և հին ֆրանսիական աղբյուրներից տեղյակ էին Արևելքում ծնունդ առած և իրենց երկրներում տարածված բազմաթիվ աղանդներին և ամեն կերպ մանություններ էին փնտրում սրանց միջև: Կ. Պոլիս եկած բողոքականներին հարկավ ծանոթ էին միջնադարում գործած աղանդապետների նկարագիրը, սրանց պիղծ վարքն ու գործը: Մարդու այդ տեսակը այս հոգեոբսները տեսան չերեցի և նրա մանկների մեջ: Գալով Արևմտյան Հայաստան՝ Հովհաննեսը պիտի անպայման փորձեր ստեղծել համախոհների խմբեր կամ համայնքներ: Այս հարցում իսկապես նա հարազատ մնաց իրենից մի քանի դար առաջ ապրած աղանդապետների վարքագծին: Նա ամեն կերպ պետք է չարախոսեր և վատաբաներ Մայր եկեղեցին տեղի բնակչության շրջանում, պետք է մատուցեր իր «փրկչական ծրագիրը», պետք է փորձեր սովորական սոփեստության ու խաբեության ճանապարհով իր կողմը գրավել մուրդյալ հոգիները և այլն: Պատահական չէ, որ նա իր «Կատախիզիստում» ընթերցողին դիմելիս օգտագործում է «նազելի որդեակ իմ» կամ «ահա՛ տեսայք նազելիք կամ սիրելիք մեր» և այլ կեղծավոր արտահայտություններ և այլն: Հատկանշական է, որ նրա հյուսած որոգայթն էին ընկնում գյուղերի փոքրավորներն ու որոշ կարգալույծ արված կամ էլ դրանից առաջ կաթոլիկություն ընդունած հոգևորականները: Հովհաննես չերեցն ու իր համախոհները, հարկավ, աջակցություն էին ստանում նաև տեղական իշխանությունների կողմից, երբ խոսքը վերաբերում էր հայ եկեղեցու դեմ պայքարին: Բայց երբ կեսկեսներից և աղանդավորներից կազմված ավազակախմբերը դուրս էին գալիս իշխանությունների հսկողության տակից, այնժամ վերջիններս դաժան պատժիչ միջոցառումներ էին ձեռնարկում՝ արտրելով կամ տաժանակրության դատապարտելով սրանց: Այս առումով հատկանշական է չերեցի և նրա հովանավորի՝ Խնուսի քուրդ բեկի անփառունակ վախճանը հենց օսմանցիների ձեռամբ:

НЕКОТОРЫЕ ЗАМЕЧАНИЯ ВОКРУГ ЛИЧНОСТИ ГЛАВЫ СЕКТЫ «ТОНДРАКИДОВ» ИЗ АРАХВЛИ

___ *Резюме* ___

___ *Օվան իերոմոնախ Ակոբյան* ___

В статье делается попытка обсудить вопрос, кто на самом деле был основатель созданной в 18 в. в Хнусе секты псевдотондракидов Ованес. Изучив сведения разных исторических источников, автор находит, что география деятельности Ованеса была гораздо шире, чем предполагали предыдущие исследователи. Новоявленные факты дают право утверждать, что эти сектанты вовлекли в свои сети армянское население разных районов Западной Армении. Эти факты очень обеспокоили католиков всех армян Симеона Ереванци и Гукаса Карнеци, которые приняли решительные меры в деле изолирования главы секты и сектантов.